Հրատարակչական էթիկա

Իր գործունեության ընթացքում ժողովածուի խմբագրական խորհուրդըպատասխանատու է և ջանքեր է գործադրում էթիկայի կանոնների պահպանման, ինչպես նաև հեղինակային իրավունքով պաշտպանված աշխատանքների հրապարակման համար:

Խմբագրական խորհուրդը գնահատում է հոդվածների որակը բովանդակային տեսանկյունից, անկախ ռասայից, սեռից, բնակության երկրից, էթնիկ պատկանելությունից, կրոնից կամ սեռական կողմնորոշումից: Խմբագիրների կողմից ողջամիտ քայլեր են ձեռնարկում բացահայտելու և կանխելու այն հոդվածների հրապարակումը, որոնցում առկա են հետազոտական աշխատանքի կատարման նորմերի խախտումներ:Անհրաժեշտության դեպքում ներկայացվում ենուղղումներ, պարզաբանումներ, հերքումներ:

Հրապարակման ներկայացված յուրաքանչյուր հոդված անցնում է երկկողմանի կույր գրախոսություն: Ստուգման գործընթացը խիստ է և կարող է տևել 1-2 ամիս: Գրախոսողը կարող է մերժել աշխատանքը, կարող է առաջարկել լրամշակել այն և կարող է երաշխավորել հրապարակման: Աշխատանքը հավանության արժանանալու դեպքում հրապարակվում է սահմանված կարգով:

Փորձագետների կողմից գրախոսումն իրականացվում է հետևյալ սկզբունքներով.

- աշխատանքը պետք է զերծ լինի գրագողությունից և ինքնագրագողությունից,
- աշխատանքը պետք է առնչվի «Սոցիալ-տնտեսական զարգացման արդիհիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»գիտականհոդվածների ժողովածուի գիտական ուղղվածություններից որևէ մեկին,
- աշխատանքը պետք է ունենա գիտական նորույթ,
- աշխատանքը պետք է ունենա համառոտագիր և բանալի բառեր՝ 3 լեզուներով (հայերեն, ռուսերեն և անգլերեն),
- աշխատանքը պետք է համապատասխանի տեխնիկական պահանջներին:

Այն պարագայում, երբ գրախոսողը համարում է, որ չի տիրապետում համապատասխան հմտությունների տվյալ աշխատանքը գրախոսելու համար, միանգամից տեղեկացնում է խմբագրությանը' մերժելով գրախոսություն իրականացնելու առաջարկը:

Գրախոսության ընդունված հոդվածները գաղտնի փաստաթղթեր են և ցույց չենտրվում կամ չեն քննարկվում որևէ մեկի հետ առանց խմբագրության թույլտվության:

«Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀայաստանիՀանրապետությունում» գիտական հոդվածների ժողովածուում հրապարակումը անվճար է: Հրապարակված բոլոր հոդվածները հասանելիեն անվճար հիմունքներով ընթերցելու, ներբեռնելու, պատճենելու և տարածելուհամար:

Ժողովածուի քաղաքականությունը թույլ է տալիս հեղինակներին պահպանել իրենց հոդվածների հեղինակային իրավունքները:

Խմբագրություն
«Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» գիտական հոդվածների ժողովածուի
editoreconomics.sci@gmail.com